

ՓՐԿԱՐԱՐ ՀՐԵՇՏԱԿԸ *)

Պատմուածք ՄԱՐԿ ՏՎԷՆԻ

I

Օլիվիէ Կրոմվելի ժամանակներն էին **):

Ամողջ զօրքի մէջ Մայքերից աւելի երիտասարդ գնդապետ չը կար.—նա հազիւ երեսուն տարեկան լինէր: Տառնօթ տարեկան հասակից նա զինուորական ծառայութեան մէջ էր, մասնակցել էր շատ պատերազմների և իր քաջութիւնը ցոյց էր տուել բազմաթիւ ճակատամարտներում: Նա քայլ առ քայլ էր բարձրացել զինուորական սանդուղքները և հասել գնդապետի բարձր աստիճանին: Եւ այդ է պատճառը, որ չը նայելով իր ջանքերին, նա վետերանի հմտութիւն և փորձնակալանութիւն էր ձեռք բերել:

Յանկարծ սեւ, չարագուշակ ամպերը ծածկեցին նրա մինչև այժմ պայծառ հորիզոնը:

Երկար ձմեռուայ երեկոն վրայ հասաւ: Դրսում մութ ու փոթորիկ էր, իսկ սենեակում ծանր լուծիւն էր տիրում: Գնդապետն ու իր ջանիկ կինը արդէն բաց էին արել իրար առաջ դռնացած սրտերը և այժմ լուռ նստած մնացել էին վառարանի հանդէպ, ծանր խոհերի մէջ: Մնում էր միայն սպա-

*) Այս սրտաշարժ դէպքի մասին յիշատակուած է Պարլէյլի «Օլիվիէ Կրոմվելի նամակները և ճառերը» գրքում:

**) Ծն. 1599—1658, մեծ դեր է խաղացել անգլ. պարլամենտի և Մտիւարտների մէջ եղած երկարատեւ մաքառման ժամանակ. անգլիական հանրապետութեան հիմնադիրն էր և պրոտեկտորը. երկաթէ կամքի և ամենախիստ զիսցիպլինայի տիպար:

սել,—սպասեն էլ երկար չէր լինելու: Կինը այդ գիտէր և սոսկալի մտքից ամբողջ մարմնով դողդողում էր:

Նրանք միայն մի աղջիկ ունէին, եօթ տարեկան Արբին:

Նա պիտի խսկոյն ներս մտնէր ծնողներին բարի գիշեր ասելու: Գնդապետը ակամայ ասաց կնոջը.

—Արտասուքդ սրբիր ու աշխատիր հանգիստ երևալ նրա առաջ, մի վայրկեան մոռացիր սպառնացող ապագան:

—Կ'աշխատեմ մոռանալ, բայց չէ՞ որ սիրտս պատուում է կաժից:

—Սո՛ւս, գալիս է:

Շեմքի վրայ երկաց մի փոքրիկ երեխայ գիշերուայ երկար շապիկով: Գանգուր մազերը շրջանակում էին փոքրիկ սիրուն գլխիկը և և թափթփում ուսիկներին: Մի վայրկեան—և կրակոտ համբոյրները արագ տեղացին զանգուր գլխի վրայ:

—Հայրիկ այդպէս մի համբուրիր ինձ, մազերս նոր եմ սանրել:

—Ներիր, սիրելիս, մի բարկանար ինձ վրայ, և նա ձեռով ծածկեց աչքերը ու ձևացրեց իբր թէ լալիս է:

Մանկիկը վախեցաւ որ այդքան ցաւ պատճառեց հօրը իր այս խօսքերով և սկսեց հօր ձեռները յետ քաշել աչքերից:

—Լաց մի լինիր, խնդրում եմ, ես չէի ուզում, չգ վըշտացնել:—Բայց տեսնելով որ հայրը չի լալիս, ճչաց.—այ, ի՞նչ վատն ես, դու չես լալիս, խաբում ես ինձ. ես կը գնամ մայրիկիս մօտ, դու ծաղրում ես ինձ:

Եւ նա ուզեց վայր սկզուել նրա ծնկների վրայից, բայց հայրը չը թողեց:

—Ձէ, սիրուն աղջիկս, մնացիր ինձ մօտ, և ներիր ինձ, իբրեւ պատիժ հրամայիր ինչ ուզում ես, ես ամեն ինչ կ'անեմ: Դէ, ասա, ի՞նչ կ'ուզես:

Հաշտութեան դաշը կապուեց, երեխայի դէմքի վրայ նորից ժպիտ փայլեց և աղջիկը իբրեւ պատիժ պահանջեց, որ հայրը մի հէքիաթ պատմի.

Եւ յանկարծ...

Ծնողները դադարեցրին իրանց շունչը և ականջ դրին:

Քայլեր: Մօտենում են, ոտի ձայները աւելի լսելի եղան, յետոյ քայլերը հեռացան, նրանց ձայնը նուազեց ու անհետացաւ:

Ծնողները հանգստացած շունչ առան և հայրը կրկնեց.

—Հա, հէքիաթ, ուրախ հէքիաթ:

—Ձէ, հայրիկ, միշտ չի կարելի ուրախ հէքիաթներ պատ-

մել: Այսօր մի սարսափելի հէքիաթ պատմիր, դայեակն ասում է, որ մարդիկ միշտ ուրախ չեն լինում. ճշմարիտ է:

Մայրը ծանր հոգոց հանեց և նրա մտքերը դարձեալ դարձան դէպի անխուսափելին: Հայրը տխուր նկատեց:

— Ծճմարիտ է, թանկագինս: Աշխարհում վշտեր էլ կան: Ծճմարիտ է:

— Ուրեմն, հայրիկ, մի հէքիաթ պատմիր վշտի մասին, բայց այնպիսի սարսափելի, որ մենք ամենքս էլ դողանք վախից և կարծենք, թէ այդ ցաւը մեզ է պատահել: Մայրիկ, մօտ նստիր, և ձեռք բռնիր, որ շատ չը սարսափենք. հիմայ սկսիր, հայր:

— Լաւ: Կար չը կար, երեք գնդապետ կար:

— Ես գիտեմ գնդապետն ինչ է. դու գնդապետ ես, չէ՞. դէ, յետո՞յ:

— Դու գիտես, որ պատերազմի ժամանակ ամեն բանից աւելի զիսցիպլինան է պահանջւում:

Անհասկանալի խօսքերը հարուածեցին երեխային: Նա զըլուխը բարձրացրեց և զարմացած հարցրեց.

— Այդ ուտելու բան է, հայր:

Ծնողները ակամայ ժպտացին: Հայրը պատասխանեց.

— Չէ, բոլորովին ուրիշ բան: Այդ գնդապետները չը կատարեցին մեծի հրամանը: Նրանց հրամայուած էր, որ ձևացնեն թէ յարձակում եմ թշնամու վրայ, որպէսզի զլխաւոր զօրքին միջոց տան նահանջելու, յետ դառնալու, բայց այդ սպաները չը կարողացան իրանց զսպել, իսկապէս յարձակուեցին թշնամու վրայ, ջարգեցին նրան ու փախցրին:

Մեծը բարկացաւ նրանց վրայ, որ ձիշտ չը կատարեցին իր տուած հրամանը և նրանց դատի ենթարկեց, թէ և իհարկէ գոյեց նրանց քաջութիւնը:

— Մեծը, — այդ Կրումկէն է, չէ՞, պապա:

— Այո՛:

— Ես նրան տեսել եմ, նա յաճախ անցնում էր ձիով մեր տան առաջով և միշտ կարծես բարկացած էր ու ամենքը վախում էին նրանից... Միայն ես չեմ վախում, նա միշտ ինձ վրայ քնքոյշ հայեացք էր դրում:

— Ախ, անգին շատախօս. դէ, լսիր հէքիաթը:

Գնդապետներին բանտակեցին ու բերին Լոնդոն. այստեղ նրանցից ազնիւ խօսք առան ու արձակեցին, որ գնան մաս բարով ասեն իրանց ազգականներին:

Կրկին քայլեր: Ամենքը լսողութիւնը լարեցին:

Չէ, անցան:

Երիտասարդ կինը յենուեց ամուսնուն, նրա ուժերը սպառուում էին:

— Եւ անա այս առաւօտ նրանք հասան Լոնդոն:

Երեխայի աչքերը լայն բացուեցին զարմանքից:

— Ինչպէս, հայրիկ, ուրեմն դա հէքիաթ չէ, դա ճշմարիտ եղած բան է:

— Այո, զաւակս:

— Որքան ուրախ եմ: Այդ աւելի լաւ է, շարունակիր: Այդ ի՞նչ է, մայրիկ, ինչի՞ ես լալիս:

— Ոչինչ, անուշիկս, ես... մտածեցի նրանց ազգականների մասին:

— Մի լաց լինիր, մայրիկ, կը տեսնես որ վերջը լաւ կը լինի. հէքիաթները միշտ լաւ են վերջանում: Դէ, շուտ արա շարունակիր, վերջը ամենքն էլ երջանիկ կը լինեն, գիտեմ, ան, կը տեսնես, մայրիկ:

— Ամենից առաջ նրանց տարան բերդը:

— Օ՛, ես ճանաչում եմ բերդը: Այստեղից երևում է: Յետոյ, հայրիկ:

— Բերդում զինուորական դատարանը մահի դատապարտեց նրանց:

— Սպանել, հայրիկ:

— Այո:

— Ֆո՛ւ, ի՞նչ վատն են: Մայրիկ, դու դարձեալ լալիս ես: Մի լաց, ամեն ինչ լաւ կը լինի: Շուտ-շուտ պատմիր հայր: Շատ դանդաղ ես ասում:

— Գիտեմ, բայց պիտի մտածեմ պատմելիս:

— Մի մտածիր, ուղղակի պատմիր:

— Լաւ: Ուրեմն երեք գնդապետները...

— Դու նրանց ճանաչում ես:

— Այո, սիրունիկս:

— Գնդապետները դատապարտուեցին մահի. ամենքը շատ ցաւում էին, մինչեւ անգամ՝ դատաւորներն իրանք գնացին գլխաւոր հրամանատարի մօտ և ասացին, թէ գնդապետները իրանց պարտքն են կատարել, չի կարելի արդեօք նրանց կեանքը խնայել, կամ գոնէ նրանցից մէկին միայն գնդակահարել: Մեծը չը համաձայնեց, որովհետեւ թէն ճշմարիտ է գնդապետները իրանց պարտքն էին կատարել, բայց միևնոյն ժամանակ նրանք հրամանազանց էին եղել, ուստի պէտք է կրէին իրանց պատիժը, որ ուրիշներին օրինակ լինի: Նա կանչեց իր մօտ դատապարտուածներին և հարցրեց, թէ ի՞նչպէս կը վարուէին եթէ իր տեղը լինէին: Եւ երեքն էլ միաբերան պա-

տասխանեցին, որ արժանի են մահուան իրանց անհնազանդութեան համար: Այս պատասխանը շատ յուզեց հրամանատարին, նա մի րոպէ միտք արեց և ասաց.

—Վիճակ գցեցէք. մէկը կը մեռնի, միւսները կենդանի կը մնան:

—Յետոյ, ապա, վիճակ գցեցին: Եւ որը մեռաւ նրանցից. —Խեղճճիկ:

—Ո՛հ, չը գցեցին, մերժեցին:

—Ի՞նչի, հայրիկ:

—Նրանք ասացին, —մենք միասին ենք խանգարել զինւորական դիպցիպլինան, միասին էլ պիտի տուժենք:

Կրկին քայլերի ձայն!

Քամին է! Օհ, ոչ, իսկական քայլեր են, թմրուկներ են խփում, զինւորական երաժշտութիւն...

—Բացէք, յանուն օրէնքի: Լսուեց դրսից:

—Զինուորներն են, ես սիրում եմ զինուորներին, թողէք ես բանամ դուռը: Նա ցած թռաւ ծնկների վրայից, վազեց դէպի դուռը ու լայն բացեց:

—Ներս եկէք, ներս եկէք: Հայրիկ, գրենադերներ են! Ես ճանաչում եմ գրենադերներին!

—Զինուորական վաշտը ներս մտաւ և շարուեց, սպան զինւորական պատիւ տուեց, գնդապետը լուռ և անվրդով նոյն ձևով պատասխանեց, կինը մեռելի պէս սփրթնած դէմքը, բայց հանգարտ կանգնած մնաց ամուսնու կողքին, այն ինչ երեխան դիտում էր ամենքին զմայլած աչքերով...

Մի երկար, անվերջ գրակախառնութիւն, և պոկուելով կընոջից ու երեխայից, գնդապետը հաստատ քայլերով անցաւ խմբակի գլուխը և դիմեց դէպի դուռը, Լսուեց հրաման.

—Առաջ, դէպի բերդ:

—Տեսար, մայրիկ, ինչպէս լաւ վերջացաւ, ես ասում էի քեզ: Հայրիկը գնաց, որ ազատի խեղճ գնդապետներին:

—Սեղճ իմ երեխայ, անմեղ երեխայ, մորմոքաց մայրը, կրծքին սեղմելով իր գաւազին:

II

Միւս առաւօտ դժբախտ կինը, կսկծից ու ցաւից, ընկաւ անկողին, բժիշկներն ու խնամող կինը անպակաս էին նրա գլխավերեից, Աբբիին ներս չէին թողնում և պատուիրել էին, որ խաղայ մանկանոցում ու չը նեղացնի հիւանդ մօրը: Երե-

խան հագնուեց ու դուրս վազեց փողոց: Նա մտածեց, որ հայրը բերդումն է, չը գիտէ, որ մայրիկը տկար է,—պէտք է իմաց տալ նրան:

Մի ժամից յետոյ կրոմվիլը կանչել տուեց դատաւորներին. նա անշարժ կանգնած էր սենեակի մէջ տեղը գոռոզ դէմքով և սպասում էր, որ նրանք խօսեն:

Եւ նրանցից մէկը ասաց.

—«Մենք աղաչեցինք, որ համաձայնեն, բայց նրանք միանգամայն մերժում են, չեն կամենում վիճակ զցել: Նրանք պատրաստ են երեքն էլ մեռնելու»:

Կրոմվիլի դէմքը մռայլուեց. նա երկար լուռ կանգնած էր:

—Լաւ, ասաց վերջապէս, թող մի ուրիշը վիճակ զցի: Ուղարկեցէք նրանց ետևից, կանգնեցրէք նրանց միւս սենեակում երեսները դէպի պատը: Երբ կը գան, ինձ իմաց արէք:

Երբ մենակ մնաց նա, կանչեց հերթապահ սպային և հրամայեց, որ դուրս գայ փողոց և առաջին պատահած երեսային իր մօտ բերի:

Հաղլւ սպան դուրս եկաւ, հանդիպեց Արքիին և բերեց մտցրեց սենեակ:

Փոքրիկ աղջիկը ճանաչեց Կրոմվիլին,—այն մարդուն, որի անունից դող էին ընկնում ոչ միայն հասարակ մահկանացուները, այլև տէրութեան ամենանշանաւոր անձինք,—և առանց քաշուելու բարձրացաւ նստեց նրա ծնկների վրայ և ասաց.

—Ես ձեզ ճանաչում եմ, դուք Կրոմվիլն էք! Ես ձեզ առաջ էլ եմ տեսել, երբ դուք ձիով մեր տան առաջով անցնում էիք: Ամենքը ձեզանից վախում էին, միայն ես չէի վախում, դուք երբէք ինձ վրայ բարկացած չէիք նայում, յիշում էք: Ինձ մըտաբերում էք: Ես զեռ հագած ունէի մի կարմիր վերարկու, իսկ առջևից կախ էին երկու կապոյտ ժապաւէտներ: Յիշում էք:

Ժպիտը փայլեց Կրոմվիլի գոռոզ դէմքի վրայ:

—Ես շատ ցաւում եմ, մանկիկս, ես ամաչում եմ, որ... Բայց երեսան ընդհատեց.

—Ուրեմն, մոռացել էք: Ա՛յ, ես ձեզ չեմ մոռացել:

—Այլևս չեմ մոռանայ քեզ, խօսք եմ տալիս: Կը ներես ինձ. արի՛ բարեկամանա՛ր: Դու ինձ յիշեցնում ես աղջկանս, նա այլևս չը կայ, նա էլ քեզ պէս գգուող և սիրալիր էր... Նա էլ ոչ ոքից չէր քաշուում, մօտենում էր ամենքին և ամենքին բախտաւորացնում էր իր գգուանքով... Նա յաճախ նստում էր գոգումս, ինչպէս հիմա դու ես նստած, և քեզ պէս էլ թեթևացնում էր

սիրտը հոգսերից ու կսկծից: Մենք միշտ միասին էինք և խաղում էինք: Այդ վաղուց էր, վաղուց:

— Եւ դուք նրան սիրում էիք, շատ էիք սիրում, շատ:

— Իհարկէ: Նա հրամայում էր, և ես կատարում էի:

— Որքան բարի էք, համբուրեցէք ինձ:

— Ուրախութեամբ: Ահա, այս համբոյրը քեզ, այս էլ իմ հանգուցեալ փորրիկին. հիմա դու էլ կարող ես հրամայել, ես կը լսեմ ու կը կատարեմ:

Երեխան ցնծութիւնից ծափ տուեց, բայց այդ ըոպէին դրան ետեւից լսուեցին ծանր քայլերի ձայներ:

— Զինւորներ են, զինւորներ! ուզում եմ տեսնել նրանց:

— Իսկոյն, սիրունիկս, սպասիր, ես պիտի քեզ մի յանձնարարութիւն տամ:

Կրոմվելը ցոյց տուեց նրան երեք գնդակներ մեղրամոմից շինած, երկուսը սպիտակ, երրորդը կարմիր: Այս վերջինը դատապարտուած գնդապետներից մէկին պիտի մահի տանէր:

— Ինչ սիրուն գնդակներ են, ինձ համար են. այս կարմիրն էլ իմն է:

— Չէ, զաւակս, դրանք ուրիշների համար են, նայիր այնտեղ, այն միւս սենեակում դու կը տեսնես երեք մարդ, որոնց երեսները դէպի պատն են դարձած, իսկ մի ձեռը պարզած յետեւ: Գնա և ամեն մէկի ձեռի մէջ այս գնդակներից մէկը դիր, յետոյ վերադարձիր ինձ մօտ:

Արբին անհետացաւ ծանր վարագոյրի յետեւը, և Կրոմվելը մենակ մնաց—Աստուած ներշնչեց ինձ այս միտքը, մտածեց նա, այժմ ես համոզուած եմ, որ արժանաւորագոյնները կենդանի կը մնան:

Մանկիկը, մտնելով միւս սենեակը, հետաքրքրութեամբ դիտեց զինւորներին ու այն երեք մարդկանց, որոնք անշարժ կանգնած էին պատի առաջ: Յանկարծ նրա դէմքը լուսաւորուեց ուրախ ժպիտով: Նա փափաց ինքնիրան.

— Օ, սրանցից մէկը հայրիկն է, ես ճանաչեցի: Նրան կարմիրը կը տամ:

Նա ուրախ, կամացուկ մօտ գնաց, գնդակները մէկ-մէկ դրեց պարզած ափերի մէջ, յետոյ հօր թևի տակով անցկացրեց չարածճի դէմքը և ասաց.

— Հայրիկ, հայրիկ, տես ինչ կայ ձեռումդ: Այդ ես եմ տուել քեզ:

Նա աչքը գցեց կարմիր գնդակի վրայ, չոքեց գետին ու կրծքին սեղմեց իր երեխային, որը նրա դահիճն էր դառել:

Զինւորները, սպաները, աղատուած դատապարտեալները,

մի ակնթարթ քարացած մնացին այս ողբերգական տեսարանի առաջ և ամենքը, յուզուած, սկսեցին հեկեկալ, չ'ամաչելով իրանց արտասուքից: Այսպէս անցաւ մի քանի ըոպէ, վերջապէս հերթապահ սպան մօտեցաւ գնդապետին և ձեռը դիպցնելով ուսին՝ արտասանեց.

— Ինձ չափազանց ծանր է այդ, բայց պարտքս ստիպում է...

— Ի՞նչ է ստիպում.— հարցրեց երեսնան:

— Պէտք է տանեմ հօրդ...

— Տանէ՞ք, ինչո՞ւ:

— Ինչո՞ւ, ես կը տանեմ նրան բերդի միւս կողմը:

— Ձէ, այդ չի կարելի: Մայրիկս հիւանդ է, և հայրիկս պիտի ինձ հետ տուն գայ: Եւ կախ ընկնելով հօր վզից՝ ասաց. Գնանք, հայրի՛կ:

— Խեղճ երեխայ, ես չեմ կարող քեզ հետ գալ, պիտի նըրանց հետ գնամ:

Երեսնան վայր թուալ յատակի վրայ և զարմանքով նայեց իր շուրջը, յետոյ վազեց դէպի սպան, և ոտը գետին խփելով, ճչաց:

— Ձէ՞ որ ասացի մայրիկը հիւանդ է, պէտք է շուտով տուն վերադառնանք:

— Ես շատ երջանիկ կը լինէի, եթէ հնար ունենայի ձեր հօր ազատ թողնելու, բայց անկարող եմ: Դէ՛հ, առաջ տարէ՛ք: Արբին կայծակի նման դուրս վազեց և մի վայրկեան չ'անցած ներս բերեց Կրոմվելին ձեռից բռնած:

— Կանգնեցրէ՛ք սրանց: Մայրիկը հիւանդ է, և հայրիկը պիտի գնայ նրա մօտ, ես ասացի սրանց, բայց ինձ չեն լսում և ուզում են տանել հօրս:

Կրոմվելը ամպեց.

— Ի՞նչպէս, հայրդ: Սա քո հայրն է...

— Այո՛, իհարկէ, թէ չէ ի՞նչի պիտի նրան կարմիրը տայի.

— Աստուած իմ, կսկծաց Կրոմվելը, ես ուզում էի, որ ամեն բան լաւ վերջանար, և յանկարծ, այս ի՞նչ զարհուրելի եղեռնագործութիւն արի ես:

Արբին համբերութիւնը կորցրել էր:

— Դու կարող ես ասել, որ բաց թողնն նրան, ասում էր նա լալով, ուրեմն ասա, դու խոստացել ես լսել ինձ, և անս ես խնդրում եմ, և դու չես ուզում խնդիրքս էլ կատարել:

Սիրալիր ժպիտը պարզեց մեծ մարդու դէմքի խոժոռ կնճիռները և նա ձեռը դնելով երեսայի ուսին՝ ասաց.

—Փնոք Աստծու, որ ժամանակին վրայ հասաւ: Զաւակս,
դու իրաւացի ես, ես խոստացայ կատարել քո հրամանները և
կատարում եմ խոստումս: Գնդապետ, դուք ազատ էք, գնացէք
ձեր զաւակի հետ:

Թարգմ. Ֆ.